

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 250-Ա

14 օգոստոսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 7-ի N 1196-Ա, N 1197-Ա, N 1198-Ա, N N 1204-Ա և N 1205-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 13-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Հրայր Ղարախանյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ Ա. Խաչատրյան 108/1 (ՀՎՀՀ 47816239).
- 2) Ա/Ձ «Մարինե Հարությունյան», Արմավիրի մարզ, գ. Նոր Արմավիր (ՀՎՀՀ 49587605).
- 3) «Իվենք Գրուփ», ՍՊԸ, ք. Երևան, Գ. Չաուշ, 50 (ՀՎՀՀ 00889587):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Recoverable Signature

X *Avinyan Tigran*

VERIFIED OCSP 14/08/20 19:13:32 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ